Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 25-06-2024 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԵԼԻՔ ԱԴԱՄՅԱՆ 2/2
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00202
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2003-10-07
1.5 ՀՎՀՀ-ն		02569972
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10502076
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.coaf.org
1.8 Էլեկտրոնային փոստը		coaf@coaf.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Օվսաննա Եղոյան		
Սերոբ Խաչատրյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Լիանա Ղալթաղչյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	163	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կաթնամթերքի արժեշղթայի զարգացման ՉիզԱփ ծրագիր	16,128,000
	Լոռին ձեր հաջորդ ուղղությունը	80,124,775
	Անգլախոս գյուղական համայնքներ ծրագիր	80,544,000

Digitally signed by
KARAPETYAN
NVARD
6009760216
Date: 2024.06.28
11:30:54 AMST

	Անգլերենի Աքսես միկրոդրամաշնորհային ծրագիր 2019-2022	1,297,359
	ՔՈԱՖ շրջանավարտների ծրագիր	1,500,000
	Աշխատանքային հմտությունների զարգացման և հյուրընկալության ոլորտում աշխատանքի տեղավորման միջոցով աջակցություն Լոռիում խոցելի խմբերի կանանց	1,095,388
	Տեղական զարգացման ոլորտում քաղաքացիների ձայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում	3,902,605
	Հույս ծրագիր	99,995,854
	ՀՀ գյուղական համայնքների զարգացում ծրագիր	2,554,325,047
	Բիզնես գործունեություն	65,750,452
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	ՀՀ գյուղական համայնքների զարգացում ծրագիր	9,148,828
	Բիզնես գործունեություն	86,801,453
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Պաշարներ	198,360
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	Համակարգչային տեխնիկա	1,653,021
	Այլ հիմնական միջոցներ	1,447,890
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Կաթնամթերքի արժեշղթայի զարգացման ՉիզԱփ ծրագիր	24,345,324	
Լոռին ձեր հաջորդ ուղղությունը	83,732,029	
Անգլախոս գյուղական համայնքներ ծրագիր	32,585,389	
Անգլերենի Աքսես միկրոդրամաշնորհային ծրագիր 2019-2022	24,403,837	
ՔՈԱՖ շրջանավարտների ծրագիր	6,622,668	
Աշխատանքային հմտությունների զարգացման և հյուրընկալության ոլորտում աշխատանքի տեղավորման միջոցով աջակցություն Լոռիում խոցելի խմբերի կանանց	6,996,801	
Հույս ծրագիր	1,067,056	
Մեղվաբուծությունը տնտեսական զարգացման շարժիչ ուժ	4,404,698	

Գյուղական համայնքների զարգացում ծրագիր	2,401,020,583
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	2,757,186,930
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	2,585,178,385

Նշումներ՝

Հաշվետվության 12-րդ կետում նշված գումարի մեջ ներառված է ձեռնարկատիրական գործունեությունից ծախսեր՝ 172,008,545 (մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն ութ հազար հինգ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 40 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Հոգաբարձուների խորհրդի կազմը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Գործունեության մասին հաշվետվություն	8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

Grant Thornton

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

22 մայիսի 2024թ.

Հոգաբարձուների խորհրդի կազմը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

- Ռիչարդ Բեզջյան, խորհրդի նախագահ
- Օվսաննա Եղոյան, անդամ
- Սերոբ Խաչատրյան, անդամ
- Բագրատ Սարգիս Բալաբանյան, անդամ
- Գարո Հ. Արմեն, անդամ
- Ալիս Սարայդարյան, անդամ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	4,707,868	4,460,036
Ոչ նյութական ակտիվներ		9,565	9,943
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		19,551	101,364
Տրված փոխառություններ		3,111	6,507
		4,740,095	4,577,850
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	451,185	16,074
Դեբիտորական պարտքեր	6	81,676	159,226
Շահութահարկի գծով դեբիտորական պարտքեր		850	-
Տրված փոխառություններ		3,396	283
Բանկային ավանդներ	7	139,676	126,826
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	344,205	112,477
		1,020,988	414,886
Ընդամենը ակտիվներ		5,761,083	4,992,736
Պարտավորություններ և պահուստներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	4,736,985	4,577,850
		4,736,985	4,577,850
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	10	122,985	74,729
Շահութահարկի գծով պարտավորություն		-	9,891
Եկամտին վերաբերող շնորհներ	11	904,637	330,266
		1,027,622	414,886
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		(3,524)	-
		(3,524)	-
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		5,761,083	4,992,736

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. մայիսի 22-ին:

Լիանա Ղալթաղչյան
Գործադիր տնօրեն

Նվարդ Կարապետյան
Գլխավոր հաշվապահ, «Թի Քբաունթ» ՍՊԸ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Գործունեության մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրացումից հասույթ		105,548	104,195
Վաճառքի ինքնարժեք		(38,535)	(82,538)
Համախառն շահույթ		67,013	21,657
Շնորհներից եկամուտ	12	2,098,841	2,034,926
Ծրագրային ծախսեր	13	(1,776,589)	(1,934,489)
		389,265	122,094
Այլ եկամուտ		3,440	4,553
Հիմնական միջոցների իրացումից օգուտ/(վնաս), զուտ		(389)	200
Իրացման ծախսեր		(83,770)	(9,136)
Ընդհանուր և վարչական ծախսեր	14	(323,872)	(106,706)
Այլ ֆինանսական արդյունքներ		1,365	(12,642)
Ֆինանսական եկամուտ	15	11,504	11,528
		(2,457)	9,891
Շահութահարկի գծով ծախս		(1,067)	(9,891)
		(3,524)	-

Գործունեության մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Տարվա արդյունք	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-
Տարվա արդյունք	(3,524)	(3,524)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(3,524)	(3,524)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(3,524)	(3,524)

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	(3,524)	-
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	300,947	265,667
Հիմնական միջոցների օտարումից վնաս	71,785	3,559
Շահութահարկի գծով ծախս	(1,067)	9,891
Ֆինանսական եկամուտ	(11,504)	(11,528)
Շնորհներից եկամուտ	(2,098,841)	(2,034,926)
Այլ ֆինանսական արդյունքներ	(1,365)	12,642
	(1,741,435)	(1,754,695)
Փոփոխություններ հետևյալ հոդվածներում՝		
Պաշարներ	(3,777)	40,567
Դեբիտորական պարտքեր	77,550	(73,509)
Բանկային ավանդներ	(12,850)	(20,357)
Կրեդիտորական պարտքեր	48,030	(24,964)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(1,632,482)	(1,832,958)
Վճարված շահութահարկ	(11,808)	(8,065)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(1,644,290)	(1,841,023)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(968,149)	(1,366,357)
Տրված փոխառություններ	283	(6,790)
Ստացված տոկոսներ	11,504	11,528
Ստացված շնորհներ	2,830,789	3,285,213
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	1,874,427	1,923,594
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	230,137	82,571
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	1,591	(13,858)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	112,477	43,764
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	344,205	112,477

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (Հիմնադրամ) հիմնադրվել է 2003թ.:

Հիմնադրամի հիմնական նպատակն է՝ ցուցաբերել աջակցություն երեխաների բարեկեցության, առողջապահության և կրթության բնագավառներում Հայաստանում՝ առողջապահական, կրթական, ենթակառուցվածքային, տնտեսական զարգացման և սոցիալական ծրագրերի իրականացման միջոցով:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ. կազմել է 169 մարդ (2022թ.՝ 121 մարդ):

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0001, Մելիք-Ադամյան 2/2:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի

նկատմամբ: Մյուս կողմից, ՀՀ կենտրոնական բանկը ոչ մի միջոց չձեռնարկեց, որպեսզի թուլացնի հայկական ազգային արժույթի դիրքերը:

2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր և տնտեսվարող սուբյեկտների վրա: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 17-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2023թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 17	*ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում(ՀՀՄՍ 8 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում*	*1 հունվարի 2023թ.*

	(ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)	
ՀՀՄՍ 12	*Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ (ՀՀՄՍ 12 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ*
ՖՀՄՍ ՓՄՁ-ների համար	*Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 մոդելային կանոններ (ՖՀՄՍ ստանդարտի փոփոխություն ՓՄՁ-ների համար)*	*1 հունվարի 2023թ*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	**Ստանդարտի կամ մեկնաբանության անունը**	**Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի**
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՖՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՀՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7	*Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 21	*Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություն)*	*1 հունվարի 2025թ.*

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու

համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	20-30 տարի
Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ	-	3-5 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5-10 տարի
Տնտեսական գույք	-	5 տարի:

Հողի հաշվեկշռային արժեքը չի մաշվում, քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրի համար:

3.4 Վարձակալված ակտիվներ

Հիմնադրամը կնքում է վարձակալական պայմանագրեր հիմնականում գրասենյակային տարածքի համար: Գրասենյակային տարածքի գծով վարձակալական պայմանագիրը սկզբնապես կնքվել է 3 տարի ժամկետով: Հիմնադրամը չի կնքում վաճառքի և հետադարձ վարձակալության պայմանագրեր: Բոլոր վարձակալության պայմանագրերը կնքվում են անհատական հիմունքներով:

Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

3.5 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները:

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամտում կամ այլ ֆինանսական արդյունքներում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 17.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները, դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում:

Դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Հիմնադրամը հաշվառում է դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական պարտքերը: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 17.2-ում:

Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհներ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Շնորհները, որոնք ստացվել են դոնորների կողմից, սակայն հաշվետու ամսաթվի դրությամբ չեն օգտագործվել ըստ նպատակայնության, ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես եկամուտներին վերաբերող շնորհներ (ընթացիկ

պարտավորություն) և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ այդ շնորհների օգտագործմանը զուգընթաց:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Շնորհների ճանաչման և հաշվառման ժամանակ Հիմնադրամի ղեկավարությունը կիրառել է դատողություններ, որոնք նկարագրված են ծանոթագրություն 17-ում:

3.8 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

3.9 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.10 Եկամուտ

Եկամուտը ձևավորվում է հիմնականում հյուրանոցային ծառայության մատուցումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել եկամուտ, թե ոչ, Հիմնադրամն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել եկամուտը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Շնորհներից եկամուտ

Այս եկամտի ճանաչման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.7-ում:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Հող, շենքեր և շինություններ	Մեքենաներ, սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ, տնտեսական գույք և այլ	Անավարտ շինարարություն, վարձակալած ակտիվի բարելավում	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,680,524	387,727	407,120	611,206	4,086,577
Ավելացում	20,420	158,533	167,698	1,006,701	1,353,352
Օտարում	(23)	(11,363)	(4,233)	(350)	(15,969)
Ներքին շարժ	241,990	432	(432)	(241,990)	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,942,911	535,329	570,153	1,375,567	5,423,960
Ավելացում	128,603	64,937	28,090	772,736	994,366
Օտարում	-	(17,887)	(7,361)	(7,998)	(33,246)
Ներքին շարժ	1,298,577	66,413	137,441	(1,502,431)	-
Վերադասակարգում պաշարներին	-	-	-	(434,134)	(434,134)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,370,091	648,792	728,323	203,740	5,950,946
Կուտակված մաշվածություն					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	292,461	218,668	168,909	34,386	714,424
Տարվա հաշվարկ	87,955	79,100	68,384	26,470	261,909
Օտարման հետևանքով դուրսգրում	(23)	(8,939)	(3,447)	-	(12,409)
Ներքին շարժ	-	432	(432)	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	380,393	289,261	233,414	60,856	963,924
Տարվա հաշվարկ	125,621	76,672	81,423	15,798	299,514
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(15,433)	(4,927)	-	(20,360)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	506,014	350,500	309,910	76,654	1,243,078
Հաշվեկշռային արժեք					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,562,518	246,068	336,739	1,314,711	4,460,036
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,864,077	298,292	418,413	127,086	4,707,868

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

«Հող, շենքեր, շինություններ» դասում ավելացումները ներկայացնում են՝ հողակտոր Արմավիրում՝ 26,391 հազար դրամ, հետևյալ շենքերի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը՝ Համագումարների կենտրոն՝ 1,298,577 հազար դրամ, Արմավիրի ԵԸԾ՝ 27,245 հազար դրամ, Արմավիրի Սմարթ կենտրոն՝ 12,694 հազար դրամ, այլ ավելացումներ՝ 62,273 հազար դրամ (2022թ.՝ «Տներ Արցախցիների համար» ծրագրի շրջանակներում ձեռբերված բնակելի տներ՝ 21,329 հազար դրամ, Լոռու մարզի «ՔՈԱՖ Սմարթ» համալիր և Համագումարների կենտրոն՝ 707,419 հազար դրամ, Արմավիրի «ՔՈԱՖ Սմարթ» կենտրոն՝ 10,309 հազար դրամ և այլ կապիտալ բնույթի ծախսեր՝ 101,260 հազար դրամ):

«Անավարտ շինարարություն» դասից կատարվել է վերադասակարգում պաշարներ դասին՝ Դսեղի առողջության կենտրոնի շինարարական ծախսերը՝ 372,413 հազար դրամ, ապրանքանյութական արժեքներ՝ 61,721 հազար դրամ:

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է ծրագրային ծախսերին՝ 226,220 հազար դրամ, ընդհանուր և վարչական ծախսերին՝ 71,752 հազար դրամ (2022թ.՝ ծրագրային ծախսերին՝ 203,766 հազար դրամ, ընդհանուր և վարչական ծախսերին՝ 58,143 հազար դրամ):

5 Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անավարտ շինարարություն (Տե՛ս ծանոթ. 4)	372,413	-
Նվիրատվության համար նախատեսված ապրանքներ	70,300	8,086
Հումք և նյութեր	6,611	1,850
Վառելիք	1,861	6,128
	451,185	16,074

Հիմնադրամի պաշարները գրավադրված չեն:

6 Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված կանխավճարներ	49,791	118,907
Ստացվելիք շնորհներ	26,887	36,350
Այլ դեբիտորական պարտքեր	4,998	3,969
	81,676	159,226

7 Բանկային ավանդներ

Հազար դրամ

	Պայմանագիր			2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Ֆինանսա-կան եկամուտ, 2023թ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Ֆինանս
	Կնքման ամսաթիվ	Մարման ժամկետ	Տոկոսա-դրույք	Մայր գումար	Հաշվե-գրված տոկոս		Մայր գումար	Հաշվե-գրված տոկոս	ի եկամո 202
«Ամերիաբանկ» ՓԲԸ	16.12.2022թ.	17.12.2023թ.	9.5%	-	-	350	126,300	526	10,
«Ամերիաբանկ» ՓԲԸ	24.07.2023թ.	01.02.2024թ.	6.5%	77,000	817	817	-	-	
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	17.12.2023թ.	31.01.2024թ.	7.5%	61,000	859	859	-	-	
				138,000	1,676	2,026	126,300	526	10,

8 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	150	76
Բանկային հաշիվներ	343,601	112,401
Դրամական միջոցներ ճանապարհին	454	-
	344,205	112,477

Տե՛ս ծանոթագրություն 18՝ դրամարկղում և բանկում մնացորդների արժույթների բացահայտման համար:

9 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	4,577,850	3,472,877
Տարվա ընթացքում ստացված միջոցներ	1,558	1,335
Ավելացում եկամտին վերաբերող շնորհներից	456,980	1,369,305
Տարվա ընթացքում օգտագործում	(299,403)	(265,667)
Տարեվերջի մնացորդ	4,736,985	4,577,850

10 Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շինարարական պայմանագրերի երաշխիքային գումարների գծով պահուստ	45,538	35,357
Ստացված ծառայությունների գծով կրեդիտորական պարտքեր	40,547	28,049
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	-	4,427
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	33,415	3,728
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	2,619	1,504
Կրեդիտորական պարտքեր ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով	-	709
Կրեդիտորական պարտքեր պաշարների ձեռքբերման գծով	850	182
Այլ	16	773
	122,985	74,729

Կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Հիմնադրամի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 18-ում:

11 Եկամտին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	330,266	163,982
Տարվա ընթացքում ստացված միջոցներ	2,840,977	3,285,713
Շնորհի վերադարձ	(37,075)	(500)
Ստացվելիք շնորհներ	26,887	19,635
Տեղափոխում ակտիվներին վերաբերող շնորհներին (տե՛ս ծանոթ. 9)	(456,980)	(1,369,305)
Տարվա ընթացքում օգտագործում	(1,799,438)	(1,769,259)
Տարեվերջի մնացորդ	904,637	330,266

Ավելացումները ներկայացնում են հետևյալ դոնորներից ստացված միջոցները՝

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Հայաստանի մանուկներ հիմնադրամ, Նյու Յորք	2,530,605	3,064,386
H. O. P. E. ծրագիր	98,996	-
ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն	81,841	81,573
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ GmbH)	80,125	19,008
Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության (ԱՀԱԸ) Հայաստանի մասնաճյուղ	16,128	11,070
ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատուն	-	44,727
ՀՀ-ում Կանադայի դեսպանատուն	-	10,743
Ֆեմիլի Հելֆ Ինթերնեյշնլ 360 ՍՊԸ	-	8,337
Ամունդի Ակբա Ասսեթ Մենեջմենթ ՓԲԸ	-	8,000
ՀՀ-ում Լիտվայի դեսպանություն	-	4,267
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ	-	4,180
Տեղական ժողովրդավարական գրասենյակների գործակալություն	-	3,812
Այլ	33,282	25,610
	2,840,977	3,285,713

Եկամտին վերաբերող շնորհների տարեվերջի մնացորդները ներկայացնում են հետևյալ դոնորներից ստացված միջոցների չօգտագործված մնացորդները՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հայաստանի մանուկներ հիմնադրամ, Նյու Յորք	711,977	286,253
Н. О. Р. Е. ծրագիր	89,261	-
ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն	69,761	12,343
Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության (ԱՀԱԸ) Հայաստանի մասնաճյուղ	8,535	5,361
Ամունդի Ակբա Ասսեթ Մենեջմենթ ՓԲԸ	-	8,000
ՀՀ-ում Կանադայի դեսպանատուն	-	7,612
Այլ	25,103	10,697
	904,637	330,266

12 Շնորհներից եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	1,799,438	1,769,259
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	299,403	265,667
	2,098,841	2,034,926

13 Ծրագրային ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Սմարթ կենտրոնների ծախսեր	901,419	748,767
Ենթակառուցվածքների զարգացում	208,207	400,097
Կրթական ծրագրեր	240,131	289,621
Տնտեսական զարգացում	171,684	258,288
Սոցիալական ծրագրեր	191,892	135,074
Առողջապահական ծրագրեր	57,166	90,267
Այլ	6,090	12,375
	1,776,589	1,934,489

14 Ընդհանուր և վարչական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	173,986	36,689
Արտարժույթի փոխարկման ծախսեր	137	33,643
Սպասարկման և մաշվածության ծախսեր	35,523	9,022
Մասնագիտական և խորհրդատվական ծառայություններ	4,290	4,101
Վարձակալություն և կոմունալ ծախսեր	55,598	295
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	2,124	95
Այլ ծախսեր	52,214	22,861
	323,872	106,706

15 Ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային եկամուտ բանկային ավանդներից	2,026	10,340
Բանկային հաշիվների դրական մնացորդի վրա հաշվեգրված տոկոսային եկամուտ	9,478	1,188
	11,504	11,528

16 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

16.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները

տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Պաշարների իրացման զուտ արժեք

Ղեկավարությունը կատարել է պաշարների իրացման զուտ արժեքների գնահատում: Եթե գնահատված իրացման զուտ արժեքներն ավելի փոքր են, քան այդ պաշարների սկզբնական արժեքները, ապա կատարվել է պաշարների արժեզրկում՝ մինչև դրանց իրացման զուտ արժեքները: Եթե իրացման զուտ արժեքները տարբերվեն ղեկավարության գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

16.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Շնորհների ճանաչում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 3.7-ում՝ շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Յուրաքանչյուր դրամաշնորհային պայմանագրի համար, Հիմնադրամը գնահատում է, թե որքանով է հավանական, որ այն ամբողջովին կբավարարի դրամաշնորհին կցված պայմանները և շնորհն ամբողջովին կստանա: Նման գնահատում կատարելիս ղեկավարությունը հիմնվում է այդ դոնորի հետ ունեցած նախկին փորձի, նման դրամաշնորհներն ամբողջովին իրականացնելու Հիմնադրամի հնարավորության վրա: Այնուամենայնիվ, եթե ղեկավարությունը սխալվի իր գնահատումներում, ապա կառաջանա ֆինանսական հաշվետվությունները ճշգրտելու անհրաժեշտությունը և այդ ճշգրտումները կարող են էական լինել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների համար:

17 Ֆինանսական գործիքներ

17.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

17.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական ակտիվներ		
Բանկային ավանդներ	138,000	126,300
Մնացորդներ դրամարկղում և բանկում	344,205	112,477
	482,205	238,777

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	89,570	71,001
	89,570	71,001

18 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի՝ արտարժույթով ստացված դրամաշնորհներից և արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին

տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	ԱՄՆ դոլար	
Ֆինանսական ակտիվներ		
Մնացորդներ բանկերում	178,772	100
Զուտ արդյունք	178,772	100

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Մնացորդներ բանկերում	343,601	112,401
	343,601	112,401

Բանկային հաշիվներում մնացորդների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկեր «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն հեղինակավոր բանկ է՝ ba3 վարկանիշով, ըստ Moody's/Standard & Poor's միջազգային վարկանշային գործակալության:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Անտոկոս	Անտոկոս
Մինչև 6 ամիս	41,413	35,644
6 ամսից մինչև 1 տարի	48,157	35,357
	89,570	71,001

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները: Հիմնադրամի դրամական միջոցները գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

19 Պայմանականություններ

19.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

19.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

20 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են՝ «Հայաստանի մանուկներ հիմնադրամ Նյու Յորք»-ը, Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը, «Էներջայզ Գլոբալ Սերվիսիզ» ՓԲԸ-ն, որի հիմնադիրն է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ պրն Ռիչարդ Բեզջյանը, ինչպես նաև հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

20.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հոգաբարձուների խորհրդի կողմից կողմից: Հիմնադրամի հետ ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպություն է համարվում «Հայաստանի մանուկներ հիմնադրամ Նյու Յորք»-ը, որը գործունեություն է ծավալում Ամերիկայի Միացյալ Նահանգներում, գտնվում է ԱՄՆ, Նյու Յորք 10010, 5-րդ պողոտա, 149 շենք, սենյակ 500 հասցեում:

20.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործարքներ		
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Շնորհների ստացում	2,530,605	3,064,386
	2,530,605	3,064,386

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մնացորդներ		
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Եկամտին վերաբերող շնորհներ	339,564	286,253
Տարեվերջի մնացորդ	339,564	286,253

20.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	39,795	30,442

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 28.06.2024 10:26